ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հուլիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

100
(2950)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՒ Է ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ ԾԱՂԻԿՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼ ԴԱՏԱՎՈՐԻՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հարսի նկատմամբ հարուցված քրեական գործը կքննի «ոչ պատահական» դատավոր:

Նա նախկինում աշխատել է Ալեն Սիմոնյանի հետ, ու այժմ Սիմոնյանը ծաղիկներ է ուղարկել նրան՝ հասկացնելով, թե սխալ էր արել, երբ կալանավորեց իր հարսին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի, հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրոջ ու այլ անձանց մասով գործը մակագրվել է հենց նույն՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Մերի Մոսինյանին, որը քաղաքական իշխանության հետ ուղիղ կապ է ունեցել:

Դատավոր Մերի Մոսինյանը 2019 թվականից աշխատանքի է անցել ԱԺ-ում, բարձրացել կարիերայի աստիճաններով՝ հասնելով մինչեւ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման եւ սպասարկման բաժնի պետի պաշտոնին: Հենց այդտեղից էլ անցել է իր հաջորդ աշխատանքին՝ նշանակվելով ՀՀ Հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացմամբ դատավոր:

Արդյունքում, երբ այս գործի շրջանակում կալանավորեցին Ալեն Սիմոնյանի հարսին, 168.am-ը տեղեկություններ հրապարակեց, որ Սիմոնյանը ծաղիկներ է ուղարկել դատավորին՝ «հասկացնելու» նրա սխալ քայլը:

Այսինքն՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ցույց տալու համար, որ Մերի Մոսինյանը սխալ էր, իրենք՝ ճիշտ, վերջինիս ծաղրելու համար նրան ծաղիկներ է ուղարկել:

Մերի Մոսինյանը, սակայն, չի գնահատել իր նախկին ղեկավարի ժեստը, ու, ըստ 168.am-ի, դիմել է Հակակոռուպցիոն դատարանի նախագահին՝ Խաչիկ Ղազարյանին՝ Ալեն Սիմոնյանի արարքը գնահատելով որպես ճնշում դատավորի վրա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Օրեր առաջ մահկանացուների օդանավից հրապարակած կադրերը հեղափոխական բազմությանը մտովի տեղափոխեցին 2018 թվական, երբ Արայիկ Հարությունյանը մետրոյով էր աշխատանքի գնում, Արարատ Միրզոյանը ԴԱՀԿ-ի հետ մարտնչում էր փոշեկուլի պարտքի հարցով, իսկ Նիկոլ Փաշինյանը 3 միլիոն քաղաքացու հռչակել էր վարչապետ: Ներկայացվող փաստաթղթի համաձայն (Տես ArmLur.am կայքում)՝ մասնավոր հրամցված այցը պետբյուջեի հաշվին էր՝ հուշանվերներից մինչեւ տաքսի կամ այլ փոխադրամիջոցներ: Ավելին՝ ծախսերը ընդունվելու են ոչ թե նորմատիվների շրջանակում (ինչպիսին «նախկինների» ժամանակ էր) այլ փաստացի, ինչը նշանակում է՝ ցանկացած շռայլություն թույլատրելի է, չկա սահմանափակող նորմատիվ: Եթե Փաշինյանը մեզ հուսադրում էր վիրտուալ ապագայով՝ խոստանալով, որ «Կա՛ ապագա», իրենք ներկան են վայելում: «Ժողովուրդ»-ը նախկինում գրել էր, որ հուլիսի 14-ին Եվրոպան լարված սպասում էր ԵՎՐՈ-2024-ի վերջին՝ Իսպանիա-Անգլիա խաղին, իսկ նույն օրը աշխատանքային այցով Գերմանիայի Դաշնությունում էր Հայաստանի կառավարության պատվիրակությունը՝ Նիկոլ Փաշինյանը իր տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ Գագիկ Վանոյանը. ինչպես նաեւ գրել էինք, որ ներկայացուցչական, փոխադրամիջոցների վարձակալման եւ հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին, իսկ Գագիկ Վանոյանինը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ՔՊ-ական Խորեն Գրիգորյանը, Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժ/պ-ի պաշտոնից ազատվելուց ամիսներ անց, նոր աշխատանքի է անցել ԱԺ-ում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջինս փորձագետ-համակարգողի պաշտոն է ստացել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում: Հիշեցնենք, որ Խորեն Գրիգորյանը պաշտոնից ազատվել էր 2023 թվականի դեկտեմբերին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նրա աշխատանքից ազատման պատճառը ոչ միայն շինբարեկարգման ոլորտի տապալումն էր, այլեւ քաղաքապետարանում ունեցած տարաձայնությունները: Գրել էինք, որ նա չի ցանկացել աշխատել փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանի ենթակայության ներքո, ով Տիգրան Ավինյանի որոշմամբ՝ պետք է քաղաքին ոլորտը վերահսկեր: Մեր տեղեկություններով՝ Լեւոն Հովհաննիսյանը պահանջել էր Խորեն Գրիգորյանից հաշվետու լինել իրեն ու ցույց տալ շինթույլտվությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը: Խորեն Գրիգորյանին դուր չէր եկել իր նկատմամբ վերահսկողությունը, եւ վիճաբանությունից հետո նա աշխատանքից ազատման դիմում էր գրել: Աշխատանքից ազատվելուց հետո էլ, սակայն, Խորեն Գրիգորյանը ակտիվորեն Նիկոլ Փաշինյանին աջակցող գրառումներ էր անում, նրա լուսանկարները տարածում իր էջում, երբեմն էլ՝ ՔՊ նիստերին մասնակցում: Մենք գրել էինք նաեւ, որ Խորեն Գրիգորյանը նախորդ տարի ՔՊ կուսակցական դրամահավաքին նվիրաբերել էր 2 մլն դրամ: ԱԺ-ում աշխատանքի անցնելու մասին մեր տեղեկությունը հաստատեց նաեւ ինքը՝ Խորեն Գրիգորյանը. «Մասնագիտությամբ ազգագրագետ եմ, իսկ հանձնաժողովը ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հարցերով ու խնդիրներով է զբաղվում նաեւ, որոնք ուղիղ իմ մասնագիտական աջակցության կարիքն ունեն: ԱԺ համապատասխան հանձնաժողովի փոխնախագահ Ռուստամ Բաքոյանից եղել է աշխատանքի առաջարկ, որը սիրով ընդունել եմ», - ասաց նա: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



Հայաստանում մշտական բնակչության թվաքանակը 2024 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2,99 մլն մարդ, որը 2023-ի հունվարի 1-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից ավելի է 53 հազարով: Հարկ է նշել, որ ՀՀ մշտական բնակչության ցուցանիշների մեջ ներառված է մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված բնակչությունից ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառվածների թվաքանակը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր նախաձեռնած՝ «Հայաստանի վերափոխման՝ մինչեւ 2050 թվականի ռազմավարություն»-ում նշում էր, որ ՀՀ բնակչությունը պետք է դարձնի 5 մլն մարդ: Ստացվում է, որ բնակչության աճի գործընթացը Փաշինյանը կայացնում է ոչ թե օրինական, այլ «անօրեն» ճանապարհով: Այսինքն՝ այս դեպքում վարչապետի երազած բնակչության աճը ապահովեց ոչ թե ծնելիության մակարդակի բարձրացումը, այլ Արցախից խաղաղ բնակչության բռնի տեղահանումը: Փաստերն ապացուցում են, որ իշխանությունները նույնիսկ իրենք իրենց հանդեպ հաշվետու չեն. իսկ ՔՊ-ական Արսեն Թորոսյանը հայտարարել է, որ միայն հայերով 5 մլն բնակչություն ապահովել հնարավոր չէ, պետք է օտարերկրացիների եւս ներգրավեն՝ Փաշինյանի ծրագրերն իրականացնելու համար:

ԶՐՈՒՅՑ

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝ ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ը մտադիր է ԵՄ-ին Հայաստանի անդամակցության հանրաքվեի հարցով ստորագրահավաք կազմակերպել: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել է «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ այս հարթակը դիմել էր ԱԺ՝ հանրաքվե անցկացնելու առաջարկով, սակայն Նիկոլ Փաշինյանը «Ժողովրդավարության հայկական ֆորում»-ի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը ԵՄ-ին անդամակցելու համար հանրաքվե չի անցկացնի, քանի որ ինքը, որպես երկրի ղեկավար, արդեն իսկ գիտի ՀՀ ժողովրդի կարծիքը:

Ստորագրահավաք անցկացնելու վերաբերյալ ArmLur.am-ը մի քանի հարց է ուղղել «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանին:

-Պարոն Խզմալյան, ինչպես առաջացավ ստորագրահավաք անցկացնելու գաղափարը, ինչպե՞ս եք սկսելու այդ գործընթացը:

-Մենք համարում ենք, որ սա Սահմանադրության պահանջն է, միջազգային որեւէ կառույցին անդամակցելու համար պետք է հանրաքվե անցկացվի: Մենք անհրաժեշտ ենք համարում ստորագրահավաք սկսել ու չսպասել մինչեւ դա բարեհաճեն մեր իշխանությունները:

Ստորագրահավաքի համար դիմելու ենք ԿԸՀ, որտեղից մեզ կփոխանցեն պետական ձեւաչափերով սահմանված փաստաթղթերը, մենք պետք է հավաքենք 50 հազար ստորագրություն եւ հանձնենք ԱԺ՝ որպես պահանջ՝ հանրաքվե անցկացնելու. մենք հանրաքվե չենք կարող նախաձեռնել, դա պետք է հանձնենք ԱԺ կամ կառավարություն:

-Նիկոլ Փաշինյանը արդեն մեկ անգամ մերժել է հանրաքվեի Ձեր առաջարկը՝ ասելով, թե դրա կարիքը չկա, քանի որ ինքն արդեն գիտի ժողովրդի կարծիքը, ի՞նչ է փոխվելու հիմա:

-Նա իր անձնական կարծիքը հայտնեց, իսկ նույն ֆորումի ժամանակ նա, ի պատասխան իմ հարցին, ասաց՝ պետք է հարցնել ժողովրդին՝ ուզո՞ւմ են ԵՄ անդամ դառնալ: Ես տրամաբանական հակասություններ եմ տեսնում երկու հայտարարությունների միջեւ, ուստի մենք անցնում ենք երկրորդ մասին՝ հարցնելու ենք ժողովրդին:

-Իսկ ե՞րբ եք մտադիր սկսել ստորագրահավաքը:

-Մենք հաշվարկել ենք՝ մոտավորապես երկու-երեք շաբաթ կպահանջվի, որ հանձնենք փաստաթղթերը. շրջայցեր կլինեն մարզեր, որպեսզի մեր համախոհները եւս իրազեկ լինեն ու մասնակցեն ստորագրահավաքին:

Խոսքը օգոստոս ամսվա կեսի մասին է. ստորագրահավաքն ունի ժամկետ՝ 45-60 օր, այնպես որ, մենք արդեն սեպտեմբերի վերջին պետք է ավարտած լինենք այն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԿՆՔԻ

Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի տեքստը համաձայնեցվել է 80-90 տոկոսով: Այս մասին շաբաթ օրն օկուպացված Շուշիում հայտարարել էր Ադրբեջանի նախագահ Ալիեւը՝ խոսելով Հայաստանի հետ «խաղաղության պայմանագրի» կնքման շուրջ զարգացումներից:

Ալիեւը խաղաղության պայմանագրի վերջնական հաստատման համար կրկին առաջ է քաշում երկու հիմնական նախապայման՝ Հայաստանը պետք է համաձայնի Մինսկի խմբի լուծարմանը եւ փոխի Սահմանադրությունը:

Ադրբեջանի նախագահն արդարանում է, թե Սահմանադրության փոփոխության պահանջը պետք չէ վերագրել Հայաստանի ներքին գործերին միջամտություն:

Ըստ Ալիեւի՝ Հայաստանի Սահմանադրության տեքստում հղում կա Անկախության հռչակագրին, որում հստակ տարածքային սպառնալիք կա Ադրբեջանի հասցեին:

«Այնտեղ խոսվում է այսպես կոչված Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման մասին: Քանի դեռ այդ հոդվածը այնտեղ է՝ խաղաղության համաձայնագրի կնքումն անհնարին է»,- ասել է Ալիեւը:

Ի դեպ՝ հայկական կողմը ոչ միայն չի ընդդիմացել Ալիեւի՝ Հայաստանի Մայր օրենքը փոխելու պահաջին, այլ Փաշինյանն ինքը հայտարարել է, որ Հայաստանին նոր Սահմանադրություն է պետք, իսկ նոր ձեւավորված հանձնաժողովն արդեն իսկ զբաղվում է նոր Սահմանադրության նախագծի մշակման հարցով:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԲԱՔՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՐՑԱԽՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

«Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի ներկայացուցիչները հուլիսին տեսակցել են Ադրբեջանում ապօրինի պահվող Արցախի ղեկավարությանը:

Հնարավորություն է ստեղծվել, որ նրանք կապ հաստատեն ընտանիքների հետ:

Արցախում սեպտեմբերի 19-ի ռազմական հարձակման հետեւանքով 16 անձ է գերեվարվել, որոնց թվում են նաեւ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը եւ նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Քիչ առաջ ԵՄ խորհրդի՝ արտաքին գործերի նախարարների կողմից կայացված որոշումների կապակցությամբ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտարարությամբ է հանդես եկել:

«Մենք մեծապես ողջունում ենք ԵՄ կողմից՝ արտաքին գործերի նախարարների մակարդակով կայացված պատմական որոշումները Եվրոպական խաղաղության գործիքի ներքո Հայաստանին աջակցության տրամադրման եւ վիզայի ազատականացման երկխոսության մեկնարկի վերաբերյալ:

Սա ՀՀ-ԵՄ գործընկերության շատ կարեւոր հանգրվան է, գործընկերություն, որը խորանում է՝ հիմնված ընդհանուր արժեքների եւ սկզբունքների, ինչպես նաեւ կայունության, խաղաղության եւ բարեկեցության տեսլականի վրա:

Անկեղծորեն շնորհակալություն եմ հայտնում ԵՄ կառույցների եւ անդամ երկրների իմ գործընկերներին», - նշել է Միրզոյանը:

ՎԻԶԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵԽ արտաքին գործերի նախարարներն քննարկել են Հայաստանի հետ վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության հարցը:

«ԵԽ-ն ողջունում է Հանձնաժողովի մտադրությունը ՀՀ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու եւ երկխոսության փուլերում, այդ թվում՝ չափանիշների սահմանման եւ դրանց իրականացման գնահատման գործընթացում, Խորհրդին եւ անդամ պետություններին լիարժեք ներգրավելու վերաբերյալ»,- նշված է հաղորդագրությունում:

ՉԻ ՇՏԱՊՈՒՄ ՓԱԿԱԳԾԵՐ ԲԱՑԵԼ

ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի հայտարարությունը՝ ՀՀ ՊՆ-ում ներկայացուցիչ գործուղելու մտադրության վերաբերյալ, կառավարությունից այդպես էլ չպարզաբանվեց: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Ակնհայտ է, որ ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյան պատահական չբարձրաձայնեց այդ հարցը, ինչը նշանակում է, որ կողմերը դրա հետ կապված քաղաքական որոշում ունեն:

Հիշեցնեմ, որ ավելի վաղ Ֆրանսիայի պաշտպանական գերատեսչության ղեկավարն էր տեղեկացրել, որ ՀՀ-ում ռազմական կցորդի միջոցով ՀՀ ԶՈՒ-ի հետ ռազմական համագործակցությունը խորացնելու ծրագրեր են նախապատրաստում:

Իհարկե, մեկ բան է ռազմական գործակցության ընդլայնումը ռազմական կցորդի ակտիվ ներգրավվածությամբ, մեկ այլ խորություն է ՊՆ-ում ներկայացուցիչ ունենալու հանգամանքը, ինչը, ըստ ամերիկացի դիվանագետի, ռազմավարական գործընկերության փուլ թեւակոխելու պատմական փաստ է:

Պաշտոնական Երեւանը չի շտապում փակագծերն ամբողջությամբ բացելուն, սակայն ակնհայտ է, որ փորձ է արվում ԶՈՒ-ում արմատական փոփոխությունների գնալ, որն ունի եւ գաղափարական, եւ քաղաքական, եւ հայեցակարգային հիմք:

Զուտ ռազմական տեսանկյունից՝ այս կամ այն մոդելի առումով կողմնորոշումը կամ միտվածությունը, դեռ չի երաշխավորում այդպիսի չափանիշներով բանակի ձեւավորումը, դրա համար ահռելի աշխատանք եւ ռազմաքաղաքական ճիշտ, որակյալ ու գրագետ վերանայումներ են ենթադրում, ինչը ներկայիս ռազմաքաղաքական ղեկավարության պայմաններում բացառվում են:

Երկրորդ, դեռ պետք է հասկանալ, առկա քաղաքական համաձայնություններն առաջնային հայկական բանակի մարտունակության թռիչք են ենթադրում, թե դա իր մեջ բացառապես աշխարհաքաղաքական նպատակ է ենթադրում՝ ցույց տալու, որ ՌԴ-ից տարանջատումը նաեւ անվտանգության ուղղությամբ է, ինչը բեւեռային վերանայումների առանցքային բաղադրիչն է», - գրել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՅԴԵՆԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՀԱՐՐԻՍԻՆ

Բայդենը հայտարարել է, որ լիովին աջակցում է փոխնախագահ Քամալա Հարրիսին՝ որպես դեմոկրատական կուսակցության միասնական թեկնածուի:

«2020 թվականին իմ առաջին որոշումն էր ընտրել Քամալա Հարրիսին որպես իմ փոխնախագահ: Եվ դա իմ կայացրած լավագույն որոշումն է եղել: Այսօր ուզում եմ առաջարկել լիակատար աջակցությունս, որպեսզի նա լինի մեր կուսակցության այս տարվա թեկնածու: Դեմոկրատներ, ժամանակն է միավորվել եւ հաղթել Թրամփին. եկեք անենք դա»,- գրել է Բայդենը X-ի միկրոբլոգում:

Այդ մասին ԱՄՆ գործող նախագահը հայտնել է X-ի իր միկրոբլոգում:

«Մենք, որպես ազգ, զգալի առաջընթաց ենք գրանցել վերջին երեքուկես տարում: Այսօր Ամերիկան ունի աշխարհի ամենահզոր տնտեսությունը:

Ամերիկան, առաջնորդող դեր խաղալու առումով, երբեք ավելի լավ վիճակում չի եղել, քան այսօր:

Ես գիտեմ, որ դրանցից ոչ մեկին չէր հաջողվի հասնել առանց ձեզ՝ ամերիկացի ժողովրդի: Միասին մենք հաղթահարել ենք համավարակը եւ ամենամեծ տնտեսական ճգնաժամը Մեծ դեպրեսիայից ի վեր: Մենք պաշտպանել եւ պահպանել ենք մեր ժողովրդավարությունը: Մենք վերածնել եւ ամրապնդել ենք մեր դաշինքներն ամբողջ աշխարհում:

Ինձ համար մեծագույն պատիվ էր կյանքիս մի մասը լինելու ձեր Նախագահ: Թեեւ ես մտադիր էի վերընտրվել, բայց կարծում եմ, որ իմ կուսակցության եւ երկրի լավագույն շահերից է բխում, որ դուրս գամ ընտրապայքարից եւ մնացած ժամանակահատվածում կենտրոնանամ նախագահի իմ պարտականությունների կատարման վրա: Այս շաբաթվա վերջին ես ավելի մանրամասն կպատմեմ ժողովրդին իմ որոշման մասին»,- գրել է Բայդենը:

ՋՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒՄ

Կասպից ծովում ռուսական եւ իրանական նավերի մասնակցությամբ սկսվել են փրկարարական գործողությունների եւ ծովային անվտանգության ապահովման զորավարժությունները, Mehr գործակալությանը հայտնել է զորավարժությունների պաշտոնական ներկայացուցիչ, կապիտան Աբբաս Հասանին:

«Այս զորավարժությունները Կասպից ծովում տեղի են ունենում առաջին անգամ՝ Իրանի նախաձեռնությամբ: Այդ նպատակով երեկ ռուսական նավը (SB-45 - խմբ.) մտել է Իրանի տարածքային ջրեր, տեղի է ունեցել համակարգման խորհրդակցություն: Այսօր ընթանում է զորավարժությունների ջրային փուլը»,- մեջբերում է Հասանին:

Ըստ Mehr-ի՝ մասնակից ստորաբաժանումները վարժանքներին կմարզեն կրակի մարման, փրկարարական աշխատանքներ իրականացնելու եւ տուժածներին ուղղաթիռով փոխադրելու, ինչպես նաեւ օդային եւ ծովային թիրախների ուղղությամբ կրակելու հմտություններ:

ՎԱՐՈՐԴՆԵՐԸ՝ «ԿՈՏՐԱԾ ՏԱՇՏԱԿԻ» ԱՌԱՋ

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԸ ԳՆԱՃ Է ԳՐԱՆՑԵԼ 2.6-3 ԱՆԳԱՄ

«Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսել է, որ հեղուկ գազի գինը վերջերս կտրուկ աճ է գրանցել: Մեկ ամսում գրեթե բոլոր լցակայաններում հեղուկ գազը 80-90 դրամից դարձել է 240-250 եւ ավելի դրամ: Ստացվում է, որ հեղուկ գազը հայաստանյան շուկայում 2.6-3 անգամ գնաճ է գրանցել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից տեղեկանալ՝ կա՞ արդյոք ուսումնասիրություն, թե ինչու է վառելիքի շուկան վերածվել քաոսի:

Այնտեղից փոխանցեցին, որ Հանձնաժողովը պարբերաբար հանդես է գալիս հայտարարությամբ, փորձում է տալ հստակ պատասխաններ, իսկ «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ նշեցին, որ շուկան խիստ մրցակցային է, իսկ հայտարարություն արդեն արել են.

«Հեղուկ գազի շուկան խիստ մրցակցային է, ներմուծումներ են իրականացնում շուրջ 98 տնտեսավարող սուբյեկտ:

Խոշոր տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժինը շուկայում կազմում է շուրջ 9 տոկոս, մնացած տնտեսավարողները ունեն 5 տոկոս կամ ավելի ցածր մասնաբաժին: Հետեւաբար, շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, իսկ հակամրցակցային համաձայնությունը 90-ից ավելի սուբյեկտների միջեւ գրեթե անհնար է:

Նշենք նաեւ, որ առկա տվյալներով՝ ընթացիկ տարվա հունիսին միջինում ներմուծման գինը կազմել է 102 դրամ, իսկ հուլիսին բարձրացել է՝ կազմելով 140-170 դրամ՝ կախված տնտեսվարողից եւ ներմուծման ամսաթվից: Ընդ որում՝ նախնական դիտարկումները ցույց են տվել, որ ՌԴ-ի բորսաներում ինդեքսացիոն գները փոխվել են եւ համահունչ են ՀՀ-ում տեղի ունեցող հեղուկ գազի գնային բարձրացումներին:»,- ասված է հայտարարությունում:

Տնտեսագետները պնդում են, որ գազի գնի թանկացման հիմքում այլ բան կա: Փաստում են, որ խնդիրը պահանջարկի մեջ է, այսինքն՝ պահանջարկից է, որ գնաճ է գրանցվում:

Բանն այն է, որ հեղուկ գազը վերջին մեկ տարում ամենաէժան վառելիքն էր եւ վարորդները ձգտում էին փոխել մեքենայի վառելիքը, «օրինակ՝ բենզինով մեքենայի վրա հեղուկ գազ էին դնում»:

Հիմա այդ վարորդները «կոտրած տաշտակի» առաջ են կանգնել եւ չգիտեն՝ ինչ անել, քանի որ հեղուկ գազի գինը հավասարվում է բենզինի գնին:

Հիշեցնենք, որ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը նշել էր, որ Հայաստանում հեղուկ գազի գնի բարձրացման պատճառը բորսայական գների բարձրացումն է:

Գեւորգյանը հերքել էր տնտեսագետների այն պնդումը, թե հեղուկ գազի գինը բարձրացել է շուկայից «փոքր խաղացողների» հեռացման արդյունքում:

Հիշեցնենք նաեւ, որ 2024 թ. հունիսին մայիսի համեմատ բենզինի եւ դիզելային վառելիքի գները նվազել են 0.2 % եւ 0.1 %-ով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

10 ՄԼՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԵՄ-ն առաջին անգամ խաղաղության եվրոպական հիմնադրամից Հայաստանին կտրամադրի 10 մլն եվրո: Հայաստանի Հանրապետությանն աջակցելու համար տրամադրվելիք օգնության նպատակն է բարձրացնել Հայաստանի զինված ուժերի նյութատեխնիկական կարողությունները եւ նպաստել ճգնաժամային եւ արտակարգ իրավիճակներում խաղաղ բնակչության պաշտպանության բարելավմանը:

Բրյուսելում որոշումը կայացվել է Հայաստանի հետ ԵՄ գործընկերության շրջանակներում եւ հիմնված է ընդհանուր արժեքների վրա, ուղղված է Հայաստանում եւ Հարավային Կովկասում խաղաղության, կայունության եւ բարգավաճման խթանմանը: Այն նաեւ նպատակ ունի բարձրացնել Հայաստանի դիմադրողականությունը, արագացնել զինված ուժերի փոխգործունակությունը հետագայում երկրի կողմից միջազգային, այդ թվում՝ ԵՄ-ի կողմից կազմակերպված ռազմական առաքելություններին ու գործողություններին հնարավոր մասնակցության դեպքում: Ըստ որոշման՝ աջակցությունը թույլ կտա գումարտակի չափով ստորաբաժանման համար ապահովել լիարժեք վրանային ճամբար:

ԵՄ արտաքին եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի խոսքով՝ Հայաստանի հետ երկկողմ հարաբերություններում անվտանգությունը կարեւոր տարր է: Բարձր ներկայացուցիչը նշել է, որ ԵՄ-ն փոխադարձ շահագրգռվածություն ունի՝ ավելի ընդլայնելու իր երկխոսությունը արտաքին եւ անվտանգության քաղաքականության վերաբերյալ՝ նաեւ դիտարկելով Հայաստանի ապագա մասնակցությունը ԵՄ-ի գլխավորած առաքելություններին եւ գործողություններին:

«ԵՄ-ն հավատարիմ է Հայաստանի հետ համապարփակ քաղաքական եւ տնտեսական գործընկերությունը ընդլայնելուն՝ հիմնված ԵՄ-Հայաստան Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի վրա եւ էլ ավելի ամրապնդելու հարաբերությունները բոլոր հարթություններում: Սա ներառում է արտաքին եւ անվտանգության քաղաքականության ոլորտում երկխոսության եւ համագործակցության ակտիվացում, որը ներառում է նաեւ անվտանգության եւ պաշտպանության ընդհանուր քաղաքականությունը»,- նշված է ԵՄ խորհրդի տարածած մամուլի հաղորդագրությունում:

ԻՐԱՆԱԳԵՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Հայաստանում Իրանի դեսպան Մեդիի Սոբհանին SNN լրատվական գործակալության հետ զրույցում ասել է՝ «3+3» ձեւաչափով Արտաքին գործերի նախարարների հաջորդ հանդիպումը մոտ ապագայում տեղի կունենա Թուրքիայում, ինչպես նաեւ հավելել է՝ «սա ռազմավարական տարածաշրջան է, որը կարեւոր դեր է խաղում Իրանի եւ Հայաստանի միջեւ անվտանգության եւ առեւտրի գործում: Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության առկայությունը բարելավել է սահմանային կապը»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում իրանագետ Գարիկ Միսակյանը, անդրադառնալով հայտարարությանը, ասաց, որ դա Իրանի հստակ հայտարարված դիրքորոշումն է՝ սահմանների անձեռնմխելիության ու փոփոխության վերաբերյալ:

«Երբ Իրանը հայտարարություն է անում, դա վերաբերում է եւ Զանգեզուրի միջանցքին, եւ Սյունիքին: Իրանի ցանկացած հայտարարություն նախ կապված է հայկական կողմի արձագանքների հետ»:

Իրանագետի կարծիքով, եթե հայկական կողմը ցանկացած պարագայում համաձայնում է ինչ-որ սահմանների հանձմանը Ադրբեջանին, կամ, որ հայատարարվում են դրանք ադրբեջանական տարածքներ, այստեղ Իրանը չի կարող գործիքակազմ ունենալ: Թեհրանի հայտարությունները հիմնականում վերաբերում է նրան, որ Ադրբեջանական կողմը ռազմական ճանապարհով չփորձի որեւէ խնդիր լուծել:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԱԿՈՑ

ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ԵՆ ԵՐԵԽԱՅԻ ԱՉՔԻ ԱՌՋԵՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Սեւանի ավագանու անդամ Արսեն Աֆիյանին կյանքից զրկել են 7 տարեկան երեխայի աչքի առաջ, որն ականատես է եղել վիճաբանությանը եւ հորը կրակելու տեսարանին:

Մեզ հայտնի դարձավ, որ դատարանը կալանավորել է Լեւոն Բանդուրյանին եւ նրա հետ եւս մեկ անձի, որոնք, ըստ նախաքննական մարմնի, կյանքից զրկել են Սեւանի ավագանու անդամ Արսեն Աֆիյանին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հուլիսի 17-ին կրակոցներ, սպանություն, սպանության փորձի դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Երեւան-Սեւան ավտոճանապարհի Սեւանի վարչական տարածքում գործող «Best Western Bohemian Resort» հանգստյան գոտում հնչած կրակոցներից սպանվել է ավագանու անդամ:

Ի՞նչն է եղել կրակոցի պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կրակոցների հետեւանքով սպանվել է Սեւանի ավագանու «Սարգիս Մուրադյան» դաշինքի անդամ Արսեն Աֆիյանը:

Ըստ նախաքննական մարմնի՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հիշյալ անձանց հրազենային վնասվածք պատճառելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին հարակից հյուրանոցային համալիրի բակից ձերբակալվել եւ ոստիկանության բաժին են տեղափոխվել Գեղարքունիքի մարզի 19-ամյա եւ Տավուշի մարզի 40-ամյա բնակիչները:

19-ամյա ձերբակալվածը քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին է՝ Լեւոն Բանդուրյանը, որի սենյակից հայտնաբերվել է զենք, ու նրա հետ հյուրանոցի սենյակում է եղել եւս մեկ անձ, որը նրա ընկերն է եղել:

Քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին՝ Լեւոն Բանդուրյանը եւ 40-ամյա տղամարդը, մի խումբ անձանց հետ հանգստանալիս են եղել Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի հարակից հյուրանոցային համալիրում, որտեղ վիճաբանության մեջ են մտել նշված վայր հաճախած՝ Սեւան քաղաքի 37-ամյա բնակիչ, Աբովյան քաղաքի 42-ամյա բնակիչ տղամարդկանց եւ Երեւան քաղաքի 36-ամյա բնակիչ կնոջ հետ:

Վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, որի ընթացքում հնչել են անկանոն կրակոցներ, ինչի հետեւանքով Սեւանի 37-ամյա, Աբովյանի 41-ամյա բնակիչները, ինչպես նաեւ նշված հյուրանոցային համալիրի անվտանգության 56-ամյա աշխատակիցը ստացել են հրազենային մարմնական վնասվածքներ:

Իսկ ինչն է եղել վիճաբանության բուն պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած նախնական տեղեկությունների համաձայն՝ սպանված ավագանու անդամ Արսեն Աֆիյանը բարձր է խոսել հյուրանոցում ու նրան նկատողություն է արել քրեական հեղինակության որդին, ինչից էլ սկսվել է թեժ խոսակցությունն ու կրակոցներ են հնչել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԿԿԱՆՉԵՆ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

«Տավուշը հանուն հայենիքի» շարժման առաջնորդ, ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանին նախաքննական մարմինը կկանչի հարցաքնության: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա Տավուշի մարզում տեղի ունեցած ակցիաների ժամանակ ոստիկանների ու քաղաքացիների բախումների գործով հրավիրվել է քննչական կոմիտե ու հարցաքննվել: Գառնիկ Դանիելյանը մեզ հետ զրույցում հաստատեց, որ Տավուշի մարզում տեղի ունեցած իրադարձություններով պայմանավորված, նրան հրավիրել են հարցաքնության:

Հիշեցնենք, որ 2024թ. հունիսի 12-ին Երեւան քաղաքի Բաղրամյան եւ Դեմիրճյան փողոցների խաչմերուկում անցկացվող բողոքի ակցիայի ընթացքում կատարված առերեւույթ զանգվածային անկարգությունների դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ իրականացվում են մեծածավալ քննչական եւ վարութային գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով:

Հիշեցնենք, որ այդ օրը Բաղրամյան պողոտայում բախում տեղի ունեցավ քաղաքացիների եւ ոստիկանների միջեւ, բազմաթիվ քաղաքացիներ ստացան վնասվածքներ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ նշված մասնակիցներից 1-ի նկատմամբ զանգվածային անկարգություն կատարելու, իսկ 11-ի նկատմամբ՝ խմբի կազմում խուլիգանություն կատարելու համար հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Ազատության մեջ գտնվող մեղադրյալներին դատարան ներկայացնելու հիմքով՝ նրանցից 11-ը ձերբակալվել է, որոնց ներկայացվել են համապատասխան մեղադրանքներ:

Դատարան ներկայացված միջնորդությունների քննության արդյունքում 8 անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, երկուսի նկատմամբ՝ տնային կալանքը: Մեկ անձի նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելք:

Եվս 1 անձի, խմբի կազմում խուլիգանություն կատարելու մեղադրանքով, ձերբակալելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն է տրվել ոստիկանությանը:

Նկատենք, որ բազմաթիվ անձինք տուժել էին, բայց մինչ օրս նրանց վնաս հասցրած ոստիկաններից որեւէ մեկին պատասխանատվության չեն կանչել:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ՝ ՀՐԱՁԳԱՐԱՆԻ ՄՈՏ

2024 թվականի հուլիսի 20-ին՝ ժամը 18:35-ին, ահազանգ է ստացվել այն մասին, որ Սյունիքի մարզի Կապան քաղաքի հրաձգարանի մոտ քաղաքացիական «Վոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենա կա, որի կողքին՝ ականի պայթյունի հետեւանքով մահացած անձ, հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի եւ 337-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

«Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նախնական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նույն օրը 64-ամյա տղամարդը, հրաձգարանի մոտ գտնվող տարածքում, ՍՊԸ-ին պատկանող տեխնիկայի պահպանության շրջանակներում իր հերթափոխն ընդունելու նպատակով, գնացել է N զորամասի հրաձգարանի տարածք: Նշված վայրից հավաքել է կրակված արկերի դյուրալյումինե կտորներ՝ որպես գունավոր մետաղ հանձնելու նպատակով: Դրանց մեջ եղել է նաեւ չպայթած արկ, որը քանդելու ժամանակ առաջացած պայթյունի հետեւանքով տղամարդը ստացել է կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ դեպքի վայր է հանդիսանում Կապան քաղաքի հրաձգարանի հարեւանությամբ գտնվող դաշտամիջյան տարածքը:

Ավտոմեքենայի կողքին հայտնաբերվել է տղամարդու դի:

Նշանակվել են դիակի դատաբժշկական եւ դատաձգաբանական փորձաքննություններ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դեպքի բոլոր հանգամանքները համակողմանի պարզելու ուղղությամբ»,- ասվում է ՔԿ հաղորդագրությունում:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ սպանություն է տեղի ունեցել Գյումրիում:

Հուլիսի 21-ին իրավապահներին է ահազանգել Գ. Հ-ն եւ հայտնել է, որ ինքը գտնվել է ՌԴ-ում եւ երկար ժամանակ քրոջից տեղեկություն չի ունեցել, այսօր (խմբ.) առավոտյան վերադառնալով, դուռը կոտրել է, ներս մտել եւ տանը հայտնաբերել է քրոջ դիակը: Արդյունքում, իրավապահները շտապել են դեպքի վայր ու տան հյուրասենյակի հատակին հայտնաբերել են Վ.Հ.-ի նեխած դիակը, ով փետրվարի 8-ից ոստիկանության Կումայրու բաժնի կողմից որոնվում էր որպես հարազատների հետ կապը կորցրած անձ:

Հուլիսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ քր. օր. 155 հոդվածով (սպանություն), նախաձեռնվել է քրեական վարույթ:

Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Ավելի ուշ ոստիկանները Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղում գտնվող տանից հայտնաբերել եւ ժամը 01:40-ին սպանություն կատարելու կասկածանքով ձերբակալել ու բաժին են տեղափոխել Վ.Պ.-ին, որտեղ վերջինս խոստովանել է, որ 2023թ. ապրիլի վերջ-մայիսի սկզբներին, գտնվելով Վ.Հ.-ի տանը, երեկոյան՝ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, ձեռքերով մի քանի անգամ հարվածել է նրա դեմքին, ինչի հետեւանքով վերջինիս քթից սկսել է արյուն հոսել, որից հետո նրան պառկեցրել է բազմոցին եւ քնել, առավոտյան ժամը 6-ի սահմաններում արթնանալով՝ նկատել է, որ Վ.Հ.-ն մահացել է, եւ փորձել է նրան տեղավորել ճամփորդական պայուսակի մեջ ու տեղափոխել այլ վայր, սակայն չկարողանալով տեղավորել՝ Վ.Հ.-ի վրան գցել է վերմակ, եւ տնից վերցնելով նրա 2 բջջայինը՝ տան եւ բակի դռները բանալիով փակելով՝ ժամը 06:30-ին հեռացել է: Վերջինիս ձերբակալել են, կատարվում է քննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 19-ից հուլիսի 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 239 դեպք որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ՄՇԱԿՈՒՄ ԵՆ ՎԱԶԱՇԵՆԻ ՀՈՂԵՐԸ

Իջեւանի համայնքի սահմանամերձ Վազաշեն գյուղն ընդհանուր առմամբ 1650 հեկտար գյուղատնտեսական նշանակության հող ունի, որից շուրջ 1500 հեկտարը, սահմանամերձ վտանգավոր գոտում գտնվելու պատճառով, վազաշենցիների կողմից չի մշակվում: Մնացած 150 հեկտարից 75 հեկտարը գյուղացիների տնամերձ հողատարածքներն են, որոնք վազաշենցիները մշակում են, այդ կերպ իրենց օրվա հացի խնդիրը լուծում: Վազաշենը մոտ 60 հեկտար վարելահող ունի: Խորհրդային տարիներին Վազաշենի հողատարածքները ոռոգվում էին հարեւան՝ Այգեհովիտ գյուղի մաս կազմող Կայանի տարածքից, Աղստեւ գետից սնուցվող ոռոգման պոմպակայանի միջոցով: 1991թվականից մինչեւ այժմ պոմպակայանը չի գործում, Վազաշենի հողերը չեն ոռոգվում: Վազաշենից ստացված տեղեկատվությամբ՝ գյուղի հողերից մի քանի հարյուր հեկտարը 1994 թվականի հրադադարի հաստատումից հետո հայտնվել է գյուղի պաշտպանական դիրքերից այն կողմ: Ադրբեջանցիները Վազաշենի այդ վարելահողերը մշակում են՝ այնտեղ ցորեն եւ գարի ցանում:

ՏՈՒԺԵԼ Է 1640 ՄԱՐԴ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե որքա՞ն է կազմում մայիսի 26-ի ջրհեղեղից Տավուշի մարզի կրած վնասի չափը: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականի մայիսի 25-26-ի Դեբեդ եւ Աղստեւ գետերի հեղեղումների հետեւանքով Տավուշի մարզում տուժել է շուրջ 1640 մարդ, որոնց կրած վնասների վերաբերյալ կազվել է 438 արձանագրություն՝ անհատական բնակելի տների, փլուզված շինությունների եւ ոչ բնակելի շենք-շինությունների, տրանսպորտային միջոցների, կորցրած կամ անկած գյուղատնտեսական կենդանիների, կորսված բերքատու ծառերի եւ մշակաբույսերի, վնասված սպասարկող եւ արտադրական օբյեկտների համար: Տեղեկացնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը եւ տրամադրման կարգը հաստատելու մասին» 2024թ. հուլիսի 4-ի թիվ 1033-Լ եւ «Հայաստանի Հանրապետության Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» 2024թ. հուլիսի 4-ի թիվ 1043-Ն ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել է անհատական բնակելի տների վնասի փոխհատուցման եւ բնակիչների սոցիալական աջակցության կարգերը, իսկ գյուղացիական տնտեսություններին եւ տնտեսվարողներին պատճառած վնասի հետ կապված հարցերը գտնվում են քննարկման փուլում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՀՌՈՄ

Հռոմը բոլոր ժամանակներում գրավել է մարդկանց: Ժամանակին այն քաղաքական եւ գիտական մտքի կենտրոնն էր, պատմական ամենահզոր քաղաքներից մեկը, այսօր՝ զբոսաշրջիկների կողմից ամենասիրելի քաղաքներից մեկը. բոլորն ուզում են տեսնել հզորագույն պատմությամբ այս քաղաքի «դեմքը»: Քաղաքը, որը միջինում տարեկան 25 միլիոն զբոսաշրջիկի է հյուրընկալում, պահպանել է իր երբեմնի դեմքն ու փառքը: Ամեն քայլափոխի կարելի է տեսնել հին փողոցները, շենքերն ու արվեստի գլուխգործոցները: Այստեղ ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ մարդիկ չեն ձգտում վերափոխել քաղաքն ու ամբողջությամբ նորը դարձնել:

Հին քաղաքը շարունակում է ապրել սալիկե հատակներով, հին, բայց գեղեցիկ շենքերով, պատմական հուշարձաններով, որոնք լավագույնս են ներկայացված՝ մաքուր, կոկիկ, հաճախ ապակեպատ բացօթյա թանգարանների տեսքով:

Հին քաղաքում էլ հենց կարելի է հանդիպել ամենաժամանակակից վայելքներին, Օպերան, թատրոնները, լավագույն ռեստորանները, բարերը եւ ակումբները, լավագույն մոլերը: Հին քաղաքի շուրջ ձեւավորվել է նոր քաղաքը՝ լայն փողոցներով, նորակառույց գեղեցիկ շենքերով, կարգավորված տրանսպորտով:

Հռոմում անպայման պետք է տեսնել Կոլիզեյը, «Իսպանական աստիճանները», Պիացցա Վենեցիան, Թրեւի շատրվանը, Պիացցա Նավոնան, լինել Վատիկանում եւ անպայման տեսնել Գրիգոր Լուսավորչի ու Գրիգոր Նարեկացու արձանները: Եթե երեկոյան ժամանցի սիրահար եք, ապա կարող եք այցելել Թրասթեվերե, որտեղ բազմաթիվ փաբեր եւ բարեր են գործում:

Հռոմը տեսնելու համար Հայաստանից կարելի է ուղիղ չվերթով հասնել այնտեղ: Ավիատոմսերի արժեքները ամառային ամենաթեժ շրջանին սկսվում են 110 հազար դրամից եւ հասնում մինչեւ 250 հազարի: ՀՀ քաղաքացիների համար Հռոմ մեկնելիս պարտադիր է նախապես այցագրի ձեռքբերումը, որի համար պետք է դիմել վիզայի կենտրոն: Եթե նման փորձ չունեք, ապա կարող եք դիմել Ձեր տուրիստական գործակալությանը՝ աջակցության համար:

Հռոմում հյուրանոց ամրագրելու համար պիտի նախապես գործի անցնեք, քանի որ զբոսաշրջիկների մեծ քանակը կարող է թույլ չտալ հարմար հյուրանոց գտնել: Հյուրանոցներում մեկ գիշերվա համար արժեքը սկսվում է 100 եվրոյից՝ պայմանավորված տարվա ժամանակացույցով, զբոսաշրջության ծանրաբեռնվածությամբ եւ ամրագրման ժամկետով:

Սնվելու համար լայն ընտրություն ունեք: Մեկ անձի համար միջին հաշվարկով ճաշը եւ ընթրիքը արժեն 20-ից 30 եվրո, իսկ նախաճաշել կարող եք հենց հյուրանոցում, եթե ամրագրելիս նշել եք, որ ցանկանում եք նախաճաշով ամրագրում:

Գուրմաններն իրենց համար կարող են առանձնացնել մի քանի հրաշալի վայր եւ մի քանի ուտելիք, որոնք անպայման պետք է փորձել: Անպայման կերեք իտալական պիցցա եւ պաստա, հավատացնում ենք՝ նման համ երբեք զգացած չեք լինի, անպայման փորձեք իտալական հայտնի փորքեթթան. այն հռոմեական ժամանակների ամենահայտնի ուտեստներից է: Եթե պաղպաղակի սիրահար եք, ապա անպայման փորձեք Թրեցի շատրվանի տարածքում գտնող «Romeo Gelato» խանութի պաղպաղակները, ինչպես նաեւ շոկոլադի եւ պաղպաղակի ամենահայտնի Venchi խանութների ցանցի պաղպաղակները: Եթե Իտալիա, ապա Տիրամիսու. այցելեք Պիացցա Նավոնայի մոտակայքում գտնվող «2 sizes Tiramisu» խանութ, որտեղ կարող եք փորձել թե՛ դասական, թե՛ մրգային համերի տիրամիսու:

Կարճ ասած՝ «բոլոր ճանապարհները տանում են Հռոմ...» վայելե՛ք այն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ՎԵՈԼԻԱ ՋՐԻ» ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Լավ կլիներ՝այսօր լսեինք «Վեոլիա Ջրի» զեկույցը, բայց, ոնց հասկանում ենք, չենք լսելու: Այս մասին քաղաքապետարանի գործակարգավորական նիստի ժամանակ ասաց Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ անդրադառնալով խնդիրներին: Քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանն էլ նկատեց, որ «Վեոլիա Ջուր» ընկերությունը լավ չի կազմակերպում հեղեղատար համակարգերի մաքրումը:

«Վեոլիա Ջրի» հետ պայմանագիրը վերանայելու 6 կետանոց առաջարկ է ուղարկվել փոխվարչապետին: Սպասում են կրկնակի քննարկման: Վերանայելու գաղափարը դրական է գնահատել նաեւ ՀԾԿՀ-ն:

ԻՆՔՆԱԹԻՌ Է ՎԹԱՐՎԵԼ

Հունիսի 19-ին Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի մոտակայքում՝ «Լճեր» կոչվող տարածքի մոտ, ԱՆ-2 ինքնաթիռ էր վթարվել: Կա երկու զոհ՝ կործանման հետեւանքով մահացածներից մեկը սպա է՝ ավագ լեյտենանտ Արմեն Խաչիկի Իսախանյանը, մյուսը՝ կուրսանտ Արմեն Կարենի Խաչատրյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Նաիրի (Եղվարդ) համայնքի համայնքապետի առաջին տեղակալ Կարեն Հարությունյանը ասաց, որ իրենք մամուլից են տեղեկացել դեպքի մասին:

Հարցին, թե, ինչ վիճակում է վայրը, որտեղ ընկել է ինքնաթիռը ասաց, որ տեղյակ չէ, տեղում աշխատանքներ էին իրականացվում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

2024թ. հուլիսի 18-ին «Օպերա սուիթ» հյուրանոցում տեղի ունեցավ Երեւանի մամուլի ակումբի (ԵՄԱ)՝ էթիկական լրագրության մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

ԵՄԱ-ն, նպատակ ունենալով խրախուսել հայաստանյան լրատվամիջոցներում էթիկական լրագրության հետագա զարգացումը, մասնագիտական էթիկայի համընդհանուր կանոնների, «Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրի» դրույթների հետեւողական պահպանումը, սահմանել է էթիկական լրագրության ամենամյա մրցանակ:

Երեւանի մամուլի ակումբի՝ էթիկական լրագրության 2024թ. մրցանակակիրները՝

. Արշալույս Մղդեսյան, «ՍիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերության հաղորդավար, քաղաքական մեկնաբան,

. Հայարփի Բաղդասարյան, «Ինֆոքոմ» առցանց պարբերականի լրագրող,

. Տիրայր Մուրադյան, «Հետք» պարբերականի լրագրող:

Մրցանակները հանձնեցին Երեւանի մամուլի ակումբի էթիկայի հանձնաժողովի նախագահ, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Վիգեն Սարգսյանը, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Նունե Սարգսյանը եւ «Մեդիամաքսի» գլխավոր խմբագիր, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Դավիթ Ալավերդյանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 38 պատահար. 1 մարդ զոհվել է, 51-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

web3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՄԻՆԱՐԸ՝ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանյան web3 համայնքը Չինաստանի Ուհան քաղաքում մասնակցել է միջազգային սեմինարի՝ նվիրված բլոկչեյնին եւ կիբեռանվտանգությանը:

Սեմինարին մասնակցել են ոլորտի այնպիսի առաջատարներ, ինչպիսիք են Web3 Հայաստան հիմնադրամը, Hexens-ը, Blockstars-ը, Codeex-ը, RegTechFlow-ն եւ DigiMinds Tec-ը՝ առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) նախաձեռնությամբ:

Հայկական web3 համայնքը սեմինարին ներկայացրել է իր փորձը, ինչպես նաեւ նոր կապեր հաստատել չինական web3 համայնքի ներկայացուցիչների հետ, արժեքավոր գիտելիքներ ձեռք բերել բլոկչեյնի եւ կիբեռանվտանգության զարգացումների վերաբերյալ:

«Հայաստանը միշտ եղել է տեխնոլոգիական նորարարության առաջնագծում, եւ մեր մասնակցությունը Ուհանի սեմինարին ընդգծում է բլոկչեյնի եւ կիբեռանվտանգության ոլորտում առաջատար դիրքեր գրավելու մեր հանձնառությունը: Մենք հպարտ ենք, որ ներկայացնում ենք Հայաստանը եւ կիսում ենք ապահով եւ ապակենտրոն ապագայի մեր տեսլականով», - նշում է WEB3 Հայաստան հիմնադրամի ներկայացուցիչը:

Ուհանում Հայաստանի ներկայացուցիչները պատմել են «Բլոկչեյն եւ Web3 տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ բակալավրի որակավորում տրամադրող աշխարհում առաջին եւ միակ կրթական ծրագրի մասին, որը վերջերս էր ներկայացվել հանրությանը: Այս ծրագիրը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության եւ Web3 Հայաստան հիմնադրամի նախաձեռնությունն է, եւ մեր երկիրը միակն է, որ առաջարկում է բակալավրի կոչում «Բլոկչեյն եւ Web3 տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արմեն Վաչիկի Մուրադյանս, հայտնում եմ, որ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ-ից ձեռք բերված YTO-404 մակնիշի տրակտորի 98-73 SL համարանիշները կորել են: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 95 769 999 հեռախոսահամարով:

ՊԵՏՊԱՐՏՔԸ ՀԱՏԵԼ Է 12 ՄԼՐԴ ԴՈԼԱՐԻ ՇԵՄԸ

«ՀՀ կառավարության անխոնջ ու ազգափրկիչ գործունեության արդյունքում՝ ՀՀ պետական պարտքը հունիսի 1-ի դրությամբ հատել է 12 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ շեմը»:

Այս մասին իր էջում գրել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Եթե բաժանենք բնակչության թվի վրա, պարտքի յուրաքանչյուրիս բաժինը 4 հազար դոլարից ավելի է: Հիշե՛ք այս թվերը, երբ հաջորդ անգամ քանդվող ասֆալտը ձեր աչքը փորձեն մտցնել...», - նշել է նա:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

2024 թվականի հուլիսի 1-ից հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում երկրի վիճակագրական կոմիտեն հրապարակել է մի շարք տվյալներ: Հունիսին երկրում գնաճն ակնկալվում է արագանալ, իսկ հեռահաղորդակցության ոլորտում եկամուտների աճի տեմպերը նվազել են: Չնայած գնաճի արագացմանը՝ աճի տեմպերը զգալիորեն ցածր են ԿԲ-ի նպատակային մակարդակից: Կայուն արժույթը եւ երկրորդ ամիսն անընդմեջ տնտեսական ակտիվության աճի փոքր սառեցումը պետք է խթանեն երկրի Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հետագա թուլացումը:

Հայաստանում հունիսին գնաճի տարեկան աճը կազմել է 0,8% (կանխատեսված 0,2%-ի դիմաց): Սակայն ամսվա կտրվածքով գնանկում է գրանցվել՝ 0.9% ամսական: Գնաճի հիմնական շարժիչ ուժը եղել է ծառայությունների գների աճը (+2.7% տարեկան): Պարենային ապրանքներն ու ոչ ալկոհոլային խմիչքները էժանացել են համապատասխանաբար տարեկան 0.7%-ով եւ 2.4%: Գնաճի արագացումը սպասվածից ավելի արագ կարող է ծառայել որպես երկրում ներդրումային ակտիվության աջակցության փոքր գործոն, թեեւ մենք կարճաժամկետ հեռանկարում չենք ակնկալում էական ազդեցություն ֆոնդային շուկայի դինամիկայի վրա:

● Հայաստանում պղնձի խտանյութի արտադրության ծավալը 2024 թվականի առաջին հինգ ամիսներին տարեկան կտրվածքով աճել է 27,3%-ով՝ հասնելով մոտ 129,997 հազար տոննայի: Ցինկի եւ մոլիբդենի խտանյութերի արտադրությունը նույնպես տարեկան կտրվածքով աճել է 9,3%-ով եւ 19,9%-ով համապատասխանաբար՝ կազմելով 4,42 հազար տոննա եւ գրեթե 6,69 հազար տոննա: Ֆերոմոլիբդենի արտադրությունն, ընդհակառակը, նվազել է: Հատկանշական է, որ հունվար-մայիսին բոլոր չորս մետաղների արտադրությունն աճել է 23,1%-ով՝ հունվար-ապրիլ ժամանակահատվածի համեմատ: Նման դինամիկան արդեն պետք է արտացոլվի դրամի ներկայիս գնանշումներում, թեեւ այժմ արժույթի շարժն ավելի շատ կախված է թանկարժեք մետաղների եւ քարերի առեւտրից եւ դրանց գների տեղաշարժից, ինչը պայմանավորված է արտահանման վերջին աճող, հսկայական մասնաբաժնով (ապրիլին՝ մոտավորապես 82%-ով):

● Տնտեսական ակտիվությունը Հայաստանում 2024 թվականի հունվար-մայիսին տարեկան կտրվածքով աճել է 11,2%-ով, իսկ մայիսին՝ 5,2%-ով (ապրիլի 10,4%-ի դիմաց): Ընդ որում, առավել ակտիվ են առեւտուրը (+24,6%) եւ արդյունաբերությունը (+22,0%): Նման դինամիկան կարող է խթանել Կենտրոնական բանկին էլ ավելի նվազեցնել տոկոսադրույքը, եթե հունիսի տվյալները շարունակեն այս միտումը: Արտաքին առեւտրի շրջանառությունը նույնպես շարունակել է աճել. արտահանումը մայիսին աճել է տարեկան 57,4%-ով, իսկ ներմուծումը՝ տարեկան ընդամենը 17,2%-ով, ինչը պետք է աջակցի երկրի արժույթին:

● Հեռահաղորդակցության ոլորտի եկամուտները (հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումների ստեղծում եւ հեռարձակում, հեռահաղորդակցական գործունեություն) առաջին 5 ամիսների ընթացքում ցույց են տվել աճի տեմպերի աննշան սառեցում մինչեւ 5.4% տարեկան՝ 4 ամիսների 6.3% տարեկան աճի դիմաց: Առանձին-առանձին, մայիսին եկամուտների աճը կազմել է մոտ 2,0%: Եկամուտների աճի թուլացումը, հավանաբար, արտացոլվել է նաեւ ներդրողների տրամադրվածության եւ Telecom Armenia-ի բաժնետոմսերի գնի վրա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

IDBank–Ը ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԾՐԱԳԻՐԸ

Արդեն 3 ամիս է, ինչ մեկնարկել է IDBank-ի «Քո կողքին» ծրագիրը՝ հատուկ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար: Ծրագրի շահառու դարձած 150 երեխայի համար IDBank-ը ամեն ամիս հատկացնում է 40.000 դրամ:

Բանկից տեղեկացնում են, որ այսուհետ աջակցությունը կտրամադրվի շահառու 42 ընտանիքին IDBank-ի լոյալության նոր միավորի՝ idcoin-ի միջոցով: Այն հնարավոր չէ ո՛չ գնել, ո՛չ փոխանակել, եւ ո՛չ էլ վաճառել: Idcoin-ը կարելի է ստանալ միայն որպես նվեր՝ IDBank-ից կամ «Իդրամ»-ից:

IDBank-ի հաղորդակցման բաժնի ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանի խոսքով՝ idcoin-ն արդեն հասանելի է նաեւ «Քո կողքին» ծրագրի շահառուների համար: «Նրանք կարող են Idram&IDBank հավելվածում տեսնել idcoin-ները եւ դրանք ծախսել ըստ ցանկության՝ շուրջ 22 000 վաճառակետերում, որտեղ կա «Իդրամ» QR-ով վճարման հնարավորություն, այսինքն՝ հոգալ ինչպես կենցաղային հարցեր, այնպես էլ, օրինակ, վճարել երեխայի դասընթացների, խմբակների, կրթական նյութերի համար եւ այլն», - ասում է Տաթեւիկ Վարդեւանյանը:

Նշենք, որ idcoin կարելի է ստանալ պրոդուկտների, արշավների, հավատարմության այլ ծրագրերի շրջանակում, որոնց մասին կարելի է տեղեկանալ IDBank-ի պաշտոնական կայքից: Իսկ idcoin-ով գնումները շատ պարզ են. ուղղակի անհրաժեշտ է սքանավորել QR կոդը Idram&IDBank հավելվածով եւ համակարգը, ի թիվս վճարման այլ աղբյուրների, կառաջարկի նաեւ idcoin-ը:

Չմոռանանք նշել, որ idcoin-ը հնարավոր է օգտագործել նաեւ կոմբո-վճարումների ժամանակ: Համակարգն ավտոմատ կառաջարկի վճարել idcoin-ով, եւ եթե idcoin-ի մնացորդը չբավարարի, ապա գումարի մնացած մասը, Ձեր ընտրությամբ, կարող է գանձվել ինչպես Ձեր՝ IDBank-ի քարտերից ու հաշիվներից կամ «Իդրամ» դրամապանակից, այնպես էլ Idplus լոյալության հարթակում առկա բոնուսներից ու նվեր քարտերից:

«Քո կողքին» ծրագիրը, ինչպես եւ հայտարարված էր, շարունակվելու է մինչեւ տարվա վերջ, եւ շահառուները, ծրագրի պայմաններին համապատասխանելու դեպքում, այս ընթացքում չեն փոփոխվելու:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

«Յունիբանկը» ժամկետից շուտ ավարտեց 2 մլրդ ՀՀ դրամ եւ 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացը: Ցուցակման ավարտից հետո պարտատոմսերը կշրջանառվեն երկրորդային շուկայում՝ AMX Հայաստանի ֆոնդային բորսայի առեւտրային հարթակում:

Դրամային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը կազմում է 9.75%, ԱՄՆ դոլարով պարտատոմսերինը՝ 5%: Արժեկտրոնային եկամուտը կվճարվի եռամսյակը մեկ: Պարտատոմսերի շրջանառության ժամկետը կազմում է 36 ամիս:

Ծրագրային ազդագիրը (գրանցված է 05.06.2024թ. թիվ 1/204 Ա), դրա լրացումները եւ սույն թողարկման վերջնական պայմանները հրապարակված են www.unibank.am կայքում:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍՏՂԵՐ

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, իր 99-րդ համերգաշրջանը կեզրափակի Պուչչինիի «Քոհեմ» օպերայի համերգային կատարմամբ, որը նվիրված է Հայաստանի սոխակ՝ Գոհար Գասպարյանի 100-ամյակին:

Միջոցառումը տեղի կունենա հուլիսի 24-ին՝ ժամը 19:00-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Հանդես կգան սոպրանոներ Քրիստինա Մխիթարյանը (Միմի), Նինա Մինասյանը (Մյուզետ), տենոր Լիպարիտ Ավետիսյանը (Ռուդոլֆո), բարիտոններ Գուրգեն Բավեյանը (Շոնար), Բոգդան Բաչուն (Մարչելլո) եւ բաս Եվգենի Ստավինսկին (Քոլեն): Նրանք զարդարել են այնպիսի բեմեր, ինչպիսիք են՝ Լոնդոնի թագավորական «Քովենթ գարդենը», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն», Վիեննայի պետական եւ այլ հեղինակավոր օպերային թատրոնները:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ բեմում կլինեն Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Հովհաննես Չեքիջյան) եւ Զայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Կարինե Առաքելյան, խմբավար՝ Էմմա Առաքելյան): Օպերայի համերգային կատարումը կղեկավարի Էդուարդ Թոփչյանը:

«Արամ Խաչատրյան» համերգասրահի ճեմասրահում հուլիսի 22-ից այցելուների համար բաց կլինի Գոհար Գասպարյանին նվիրված ցուցադրությունը, որտեղ տեղ կգտնեն բացառիկ ցուցանմուշներ լեգենդար օպերային երգչուհու անձնական արխիվից: Ցուցադրությունն անվճար է:

Բացառիկ կոլորատուրային սոպրանո Գոհար Գասպարյանը ծնվել է 1924 թվականին Եգիպտոսում: Սովորել է Կահիրեի երաժշտական ակադեմիայում՝ ուսանելով եվրոպացի վարպետների մոտ:

1940 թվականից՝ դեռեւս կոնսերվատորիայում ուսանելու տարիներին, ելույթներ է ունեցել Կահիրեում: Երգել է Եգիպտոսի ռադիոյում՝ որպես մեներգչուհի: 1948 թվականին հրավեր է ստացել Միլանի Լա Սկալա օպերային թատրոնից, սակայն նախընտրել է հայրենադարձվել Հայաստան:

Հայաստանում նվագախմբի հետ Գոհար Գասպարյանի առաջին համերգը կայացել է 1949 թվականի հուլիսի 11-ին Հայաստանի սիմֆոնիկ, այժմ՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ Սուրեն Չարեքյանի ղեկավարությամբ: Երգել է Ռոզինայի արիան Ռոսինիի «Սեւիլյան Սափրիչը» օպերայից, Օլիմպիա տիկնիկի արիան Օֆենբախի «Հոֆմանի հեքիաթները» օպերայից, Ալյաբեւի «Սոխակը», Մոցարտի «Ալլելուիան»: Այդ համերգից հետո նույն թվականին՝ 25 տարեկանում, դարձել է Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական-թատրոնի մեներգչուհի: Այդ ժամանակ օպերային թատրոնի գլխավոր դիրիժորը Միքայել Թավրիզյանն էր:

Երեւանյան թատրոնում նրա առաջին բեմելը նշանավորվել է Լակմեի դերերգով՝ համանուն օպերայից: Հանդես է եկել 23 օպերաների գլխավոր դերերում: Նրա երկացանկում տեղ են գտել ավելի քան 500 ստեղծագործություններ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Queen Sensation». ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ

Օրերս Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի համերգային դահլիճում «Նյու Ջեներեյշն Փրոջեքթի» նախաձեռնությամբ կայացավ հայտնի «Queen Sensation» խմբի բացառիկ համերգը:

Հանդիսատեսը իսկապես վայելեց աշխարհահռչակ QUEEN-ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԻԹԵՐԸ: Թե՛ դահլիճում, թե՛ բեմում թեժ ռոքային տրամադրություն էր:

«Queen Sensation» խումբը առաջին անգամ էր Հայաստանում, ու իսկապես «Շոուն շարունակվեց» Հայաստանում լի վառ ու հիշվող զգացողություններով:

Դահլիճում տիրող աննկարագրելի էներգիան էր, որ անչափ ոգեւորում էր ռոք-երաժշտությունը գնահատողներին ու ինչպես հանդիսատեսը փաստեց՝ կարծես Մերկուրիի շունչն էին զգում:

Մթնոլորտը դահլիճում թեժ էր, ինչպես եւ պետք է լինի իսկական ռոք համերգի ժամանակ:

Հանդիսատեսը ինքնամոռաց տրվել էր ռոք-երաժշտության թեժ հոսքին, իսկ խմբին հաջողվեց հասնել այդչափ բարձր լարվածության:

Խումբը իր գործունեությունը սկսել է 2007 թվականին եւ բաղկացած է պրոֆեսիոնալ երաժիշտներից, ովքեր նվագել են նախկին Հարավսլավիայի տարածաշրջանի ամենամեծ եւ ամենահայտնի աստղերի հետ: Բազմաթիվ համերգներ են ունեցել ամբողջ Եվրոպայում եւ շուտով դարձել հանդիսատեսի կողմից սիրված խմբերից մեկը: 2017 թվականից սկսած հանդես են գալիս Queen Symphony շոու ծրագրով՝42 հոգուց բաղկացած սիմֆոնիկ նվագախումբ եւ 16 հոգուց բաղկացած երգչախումբ: Հաջողված շոու ծրագիրը շարունակվեց Բելգրադում եւ Զագրեբում, Հյուսիսային Մակեդոնիայում, Չեռնոգորիայում, Սլովենիայում, Խորվաթիայում եւ Եվրոպական այլ երկրներում:

2023 թ. կազմակերպվեց ամանորյա մեծ շոու Խորվաթիայում: Փետրվարին եւ մարտին խումբը նոր 37 շոու ծրագրերով շրջագայություն ունեցավ Ավստրիայում, Շվեյցարիայում եւ Գերմանիայում:

Ինչպես խմբի անդամներն են փաստում՝տարիների ընթացքում իրենց բեմական շոուն վերածվել է առանձին խմբի շոու ծրագրի, այլ ոչ պարզապես աշխարհահռչակ Queen խմբի երգերը կատարող եւ նմանակող խմբի: Խումբը նպատակ ունի ներկայացնելու Queen-ի էվոլյուցիան եւ կատարելագործումը, ինչին կհետեւեին Ֆրեդին, Բրայանը, Ռոջերը եւ Ջոնը, քանի որ «Շոուն պետք է շարունակվի»:

Խումբն իրոք անմոռաց երեկո պարգեւեց ռոք-երաժշտության երկրպագուներին՝ կատարելով Queen-ի հանրաճանաչ հիթերը, բարձրացնելով էմոցիաների փոթորիկ:

ԱՃՈՒՐԴԻ ԿՀԱՆՎԻ ՋՈՆ ԼԵՆՈՆԻ ԱԿՆՈՑԸ

Աճուրդի է հանվելու 1968 թվականին Abbey Road ստուդիա այցելած տղամարդուն լեգենդար The Beatles խմբի ղեկավար Ջոն Լենոնի նվիրած կապտագույն ապակիներով կլոր ակնոցը, գրում է PA Media-ն:

Ակնկալվում է, որ դրա դիմաց 2000-ից 3000 ֆունտ ստեռլինգ կվճարվի: Անհայտ է, թե այժմ ում է պատկանում այս ակնոցը:

«Երիտասարդը տեսավ դաշնամուրի վրա դրված ակնոցը եւ մոտեցավ, բայց նրա ընկերուհին ասաց, որ ձեռք չտա, ինչին Լենոնը պատասխանեց. «Ոչինչ: Նա կարող է վերցնել»,- պատմել է Catherine Southon Auctioneers & Valuers աճուրդային ընկերության ներկայացուցիչը:

Ակնոցն աճուրդի է հանվելու 33 սեւ եւ սպիտակ լուսանկարների հավաքածուի հետ միասին, որոնք արվել են Abbey Road-ում 1968 եւ 1969 թվականներին:

Իրերն աճուրդի կհանվեն հուլիսի 31-ին Անգլիայի Սուրեյ կոմսության Farleigh գոլֆ ակումբում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՈՉՈՒՄՆԵՐ՝ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում երեկ մարզական կոչումներ են շնորհվել մարզաշխարհի մի շարք ներկայացուցիչների: Մարզիկներին կոչումները հանձնել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

Հայաստանի Հանրապետության սպորտի վարչպետի կոչում է շնորհվել ազատ ոճային ըմբիշ ոճային ըմբիշ Գոռ Բունիաթյանին, հրաձիգներ Հայկ Մինասյանին եւ Անահիտ Սարգսյանին, բռնցքամարտիկներ Արարատ Հարությունյանին, Դավիթ Սաֆարյանին, Միսակ Տեփանյանին, կարատիստներ Հենրիկ Հայկյանին եւ Գոռ Ներսիսյանին, լողորդներ Տիգրանին Գրիգորյանին, Պետրոս Ստեփանյանին, սամբո մարզաձեւի ներկայացուցիչներ Ալեքս Խաչատրյանին, Սամվել Ղազարյանին, Միեր Մելոյանին, վոլեյբոլ մարզաձեւի ներկայացուցիչներ Միեր Մելոյանին, Ելիզավետա Տոնոյանին, Միլենա Տոնոյանին, Ամալյա Կարապետյանին, Սվետլանա Մարգարյանին, Օֆելյա Մաթոսյանին եւ Ինգա Ղուկասյանին, մարմնամարզիկներ Նանե Միքայելյանին եւ Ռոբերտ Գյուլումյանին, ինչպես նաեւ սեղանի թենիս մարզաձեւի ներկայացուցիչներ Տիգրան Պետրոսյանին եւ Գեւորգ Բեգլարյանին:

Միջազգային կարգի սպորտի վարպետի կոչում է շնորհվել հունահռոմեական ոճի ըմբիշ Մանվել Խաչատրյանին, հրաձիգ Նարե Գաբրիելյանին, բռնցքամարտիկներ Բարեղամ Հարությունյանին, Արթուր Սահակյանին, Արարատ Հարությունյանին, բազկամարտիկ Վաչագան Հովհաննիսյանին, սամբիստներ Մայիս Ներսիսյանին, Կարեն Սարգսյանին, Աննա Այվազյանին:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալը շնորհավորել է մարզիկներին եւ շնորհակալություն հայտնել մեր երկրի պատիվը բարձր պահելու համար: Կարեն Գիլոյանն ընդգծել է՝ սա քրտնաջան մարզումների եւ նվիրված աշխատանքի արդյունք է:

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ 97-ՐԴՆ ԵՆՔ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան թարմացրել է դասակարգման աղյուսակը:

ՖԻՖԱ-ի նոր վարկանիշային աղյուսակում Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը նահանջել է մեկ հորիզոնականով եւ այժմ գտնվում է 97-րդ տեղում:

Վարկանիշային աղյուսակի լավագույն տասնյակում են Արգենտինան, Ֆրանսիան, Իսպանիան, Անգլիան, Բրազիլիան, Բելգիան, Նիդեռլանդները, Պորտուգալիան, Կոլումբիան եւ Իտալիան:

● *Հուլիսի 26-ին՝ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Ջավեշտալի կատակերգություն...» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՐԺՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ինչո՞վ են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Սմբատ Վերդյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող են փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ՀՀ Կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթության չափանիշը:

Արտակ Տոնոյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում:

ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի դահլիճում օրերս կայացավ հայտնի Queen Sensation խմբի բացառիկ համերգը՝ հայտնի Queen խմբի էներգիայով լեցուն:

Queen Sensation խումբն առաջին անգամ էր Հայաստանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+11+ 16 +27 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 13 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18+ 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7+ 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14+ 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33
Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18+ 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18+ 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 19+ 22 + 32 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*